

ԶԳԵՍՏԵՂԷՆԻ ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Պաղեստինի աղէտահար հայ ժողովուրդը, արտասահմանի զանազան հայ գաղութներէն և մարմիններէն դրամական օժանդակութեանց հետ ստացած է ու կը ստանայ նաև զգեստեղէններ, ամէն տեսակի և տարիքի յարմար:

Հ. Բ. Ը. Միութիւնը, աւելի քան տարի մը առաջ, կազմակերպած և Ս. Աթոռ զրկած էր 24 հակ զգեստեղէններ, մերազն հասարակութեան բաժնուելու համար:

Սէն Բաւոյի հայ գաղութէն 2 մեծ հակ ամենաընտիր զգեստեղէններ ստացանք: Երկու ծրար ձմեռուան ներքին բրդեղէններ ստացանք Տէր և Տիկին Կ. Սէֆէրեաններէ, եգիպտոսէն, աւելի քան 120 Ֆանէլեաներ:

Միջ. Կարմիր Սաւր երկիցս զգեստեղէններ զրկած է:

Լուտերական եկեղեցին շնորհիւ Տօքթ. Մոլի բարեսրտութեան և Պր. Մելիքեանի ջանքերուն՝ քանիցս զգեստեղէն և ուրիշ նիւթական նպաստներ զրկած է մեզի, Էքաւորներուն բաշխուելու համար:

Զգեստներ և դրամական նպաստներ ստացած ենք նաև Անգլիական և Ամերիկեան եկեղեցիներէն, Տօքթ. Քլայնի և Երուսաղէմի Անգլիքան Եպիսկոպոսի ջանքերուն շնորհիւ:

Վերոյիշեալ բոլոր բարեսէր անհատներուն և հաստատութիւններուն, յանուն պաղեստինահայ կարօտելոց, կը յայտնենք մեր և իրենց շնորհակալիքն ու երախտագիտութիւնը, ճշմարիտ քրիստոնեայի վայել այս եղբայրական օժանդակութեանց համար: Վստահ ենք որ Տէրը վարձահատոյց պիտի ըլլայ վերոյիշեալ բարեգործներուն, իրենց աշխիւ սրտին համեմատ, վասնզի «Մարաւի էի և արբուցիք ինձ, մերկ էի և զգեցուցիք զիս, և որովհետեւ արարիք միում յեղբարցս, ինձ արարիք» կ'ըսէ Ս. Աւետարանը:

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

* 1 Յունիս ել. — Ս. Աթոռայ Միաբաններէն Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան արձակուրդով մեկնեցաւ եգիպտոս:

* 4 Յունիս կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր շատրան մէջ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պողարեան:

Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան տօնին նախատեսակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյն մէջ, նախազանութեամբ Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պողարեանի:

* 5 Յունիս Բշ. — Ս. Կուսմանց Լոկիսիմանց. առաւօտեան ժամերգութիւնն ու Ս. Պատարագը կատարուեցաւ Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյն մէջ, Պատարագիչն էր Հոգ. Տ. Դարեգին Աբեղայ Գաղանճեան:

* 8 Յունիս ել. — Յ. մ. Ժամը Յին ի դիմաց Գեր. Տեղապահ Հօր, Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեան ընկերակցութեամբ Հոգ. Տ. Տ. Նորայր, Հայկազուն և Հայրիկ վարդապետներու և քարտուղար Տիար Կարպիս Հինգլեանի ներկայ զրուակցեցաւ Բրիտանիոյ Հիւպատոսին կողմէ տրուած ընդունելութեան ն. վ. Անգլիոյ ճօրճ Զ. Թագաւորի ծննդեան տարեգարձին առթիւ, Բրիտանական Հիւպատոսարանին մէջ:

* 9 Յունիս Ուր. — Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, երեկոյեան ժամերգութիւնէն վերջ կատարուեցաւ վաղուան տօնին նախատեսակը նախազանութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի:

* 10 Յունիս Եր. — Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին Յիւսասի Ելանդոյն ի վիրապէն. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Գր. Լուսաւորիչ խորանին վրայ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Պարզե Վրդ. Վրթանէսեան:

Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատեսակը պաշտուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախազանութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի:

* 11 Յունիս կիր. — Տօն Կաթողիկէ եկեղեցւոյ Ս. Էլմիամնի. հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Պատարագիչ Հոգ. Տ. Միւռն Վրդ. Կրճիկեան: Քարոզիչ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան. «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քան զի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» բնարանով: Ս. Պատարագիչն վերջ կատարուեցաւ Մաղմանք Ս. Էլմիամնի նախազանութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի:

* 13 Յունիս Դշ. — Յ. մ. ի դիմաց Գեր. Տեղապահ Հօր, Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեան, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Միւռն Վրդ. Կրճիկեանի և քարտուղար Տիար Կ. Հինգլեանի, ներկայ գտնուեցաւ Օգոստոս Վիքթորիա հիւանդա-

նոցին մէջ, ի պատու հիւանդանոցի նոր տնօրէն Պր. Խուրդուրտի տրուած թէյասեղանին:

* 14 Յունիս Դշ. — Յետ միջօրէի, ի դիմաց Գեր. Տեղապահ Հօր, Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեան, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Գարեգին Արեղայ Գազանճեանի, ներկայ գտնուեցաւ քաղաքիս Սէնթ ձորձ վարժարանի ամալերջի մարզահանդէսին:

* 18 Յունիս Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տանարի վերնատան մեր մատրան մէջ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան:

* 19 Յունիս Բշ. — Առաւօտուն նախագահութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի, Տնօրէն Ժողովոյ հայրեր իջան Ժառ. վարժարան, ուր կատարուեցաւ հանդիսաւոր բացումը վարժարանի ամալերջի գրաւոր և բերանացի քննութեանց որոնք տեւեցին գրեթէ ամբողջ շաբաթ մը:

* 23 Յունիս Ուր. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյն մէջ, նախագահութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի:

* 24 Յունիս Եր. — Գիւտ Նշխարաց Ս. Հօրն մերջ Գրիգորի Երկրորդ Լուսաւորչին. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյն մէջ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Գարեգին Արդ. Գազանճեան. Յետ Ս. Պատարագի, նախագահութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի կատարուեցաւ Հայրապետական Մաղթանք վեհ. Տ. Տ. Դէորդ Զ. կաթողիկոսի հայրապետական օծման վեցերորդ տարեդարձին առթիւ:

* 25 Յունիս Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութեան մեր վերնատան մատուռին մէջ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պողարեան:

* 26 Յունիս Բշ. — Նախագահութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի, Պատ. Տնօրէն Ժողովոյ հայրերը իջան Ս. Թարգմանչաց վարժարան, ուր տեղի ունեցաւ պաշտօնական բացումը ամալերջի քննութեանց, որոնք տեւեցին երկու շաբաթ:

* 28 Յունիս Դշ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնակը պաշտուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տանարին մէջ, նախագահութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի:

* 29 Յունիս Եշ. — Ս. Թարգմանչաց Սահակայ եւ Մեսրոպայ. հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տանարին մէջ: Պատարագեց և քարոզեց Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան, բնարան ունենալով «Մի երկնիչի» հօտ փոքրիկ զի հանեցաւ Հայր ձեր տալ ձեզ դարձալութիւն: Յետ Ս. Պատարագի կատարուեցաւ Հոգեհանգիստ հայ մաքի բոլոր հանգուեցաւ մշակներուն հանգստեան համար:

* 30 Յունիս Ուր. — Երեկոյեան՝ Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան որ արձակուրդով մեկնած էր Եղիպտոս, այսօր Ս. Աթոռ ժամանեց:

* 1 Յունիս Եր. — Երեկոյեան ժամերգութիւնն

թիւնն ու վաղուան տօնին նախատօնակը կատարուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տանարին մէջ, նախագահութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի:

* 2 Յունիս Կիր. — Գիւտ Տիպ Ս. Աստուածմանի. առաւօտուն զիսաւորութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի, վարդապետ հայրեր պաշտօնական թափօրով իջան Գեթսեմանի Ս. Աստուածածնայ տանարը, ուր Ս. Կոյսի գերեզմանին վրայ, մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Պարգե Վրդ. Վրթանէսեան:

* 5 Յունիս Դշ. — Կէսօրէ առաջ, ժամը 11-ին, Օգոստ Վիքթորիա հիւանդանոցի նոր տնօրէն Պր. Խուրդուրտ իր առաջին այցելութիւնը տուաւ պատրիարքարան և ընդունուեցաւ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի կողմէ:

* 8 Յունիս Եր. — Յ.մ. ժամը 3-ին տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց վարժարանի ամալերջի տարեկան մարզահանդէսը, հովանաւորութեամբ Արեւմտեան Յարդանանի Բարձր Գովիսէր Վսեմ. ձէմալ Պէկ Թուքանի և նախագահութեամբ Գեր. Տեղապահ Հօր, ի ներկայութեան խուռներամ բազմութեան: Աւելի քան երկու ժամեր վարժարանի սաները կատարեցին զանազան մարզանքներ, տողանցքներ, վաղբեր: Հուսկ յետոյ Գեր. Տեղապահը, Վսեմ. ձէմալ Պէկ Թուքան եւ իր տիկինը, բաժնեցին օրուան մրցանակները բոլոր առաջնաւոր մարզիկներուն, ինչպէս նաեւ բաժակները պատկէթպօլի, Ֆութպօլի և բինկ-բոնկի յաղթական խումբերուն:

* 9 Յունիս Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տանարին մեր վերնատան մատրան մէջ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Գարեգին Արդ. Գազանճեան:

Յ.մ. ժամը 4-ին նախագահութեամբ Գեր. Տեղապահ Հօր, տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Մանկապարտէզի ամալերջի հանդէսը: Վարժարանի տեսուչ Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեանի բացման խօսքէն ետք, վարժարանի փոքրիկները հետզհետէ կատարեցին զանազան տրամախօսութիւններ, արտասանութիւններ, մարզանքներ, մեներգներ ու խմբերգներ: Հուսկ յետոյ Գեր. Տեղապահ Հայր բաժնեց Մանկապարտէզի աւարտական դասարանի փոքրիկներուն վկայականները, ու փակեց հանդէսը իր օրհնութեամբը:

* 14 Յունիս Ուր. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնակը պաշտուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տանարի Ս. Էջմիածին մատուռին մէջ, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Հօր:

* 15 Յունիս Եր. — Յիւստակ Տապանակիմ հնոյ եւ օճն հնոյս Ս. Եկեղեցւոյ. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Էջմիածին մատրան մէջ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Միւռն Վրդ. Կրճիկեան:

Երեկոյեան ժամերգութիւնն ու Այլակերպութեան տօնին նախատօնակը կատարուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տանարին մէջ, նախագահութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի: Նախատօնակին կցուեցաւ գահակալութեան յիշա-

տակի հանդիսութիւնը Յակոբոս Տեառնեղբոր արդար առաքելին, Քրիստոնէական Եկեղեցւոյ առաջին և առաջագահ եպիսկոպոսին և Երուսաղէմի մեր Ս. Աթոռին առաջին գահակալին, որ ըստ աւանդութեան, Ալլակերպութեան տօնին բարձրացած է Աթոռ ու հաստատած սեղան և մատուցած քրիստոնէական առաջին Ս. Պատարագը:

Յ. մ. ժամը 7ին կատարուեցան Եկեղեցիի եւ Հսկման արարողութիւնը, սաղմոսասացութեան եւ առուօտեան ժամերգութեան օրհնութեան բաժինը:

※ 16 Յուլիս Կիր. — Տօն Ալլակերպութեան Տեառն. Հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Եպիսկոպոսական խոյրի զլուսի պատարագեց Նոգ. Տ. Սուրեն Վրդ. Քէմհանեան և քարոզեց բնաբան ունենալով. «Եւ ասէին զելիցն թոր» զոր կատարելոց էր յԵրուսաղէմ» (Դուգ. Թ. 31):

Կ. ա. Գեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ աւագ Թարգման Նոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի, Աման մեկնեցաւ, շնորհաւորելու համար Նորին Վեհ. Ապտալլա Թագաւորը և վարչապետը Վսեմ. Սայիտ Փաշա Մուֆթին պայրամի տօնին առթիւ:

Իսկ Երուսաղէմի ընդհանուր կուսակալին եւ Մութասարըֆին շնորհաւորութեան զնաց Նոգ. Տ. Նորայր Վրդ. Պողարեան, ընկերակցութեամբ Նոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեանի:

※ 17 Յուլիս Բչ. — Յիւսուսի մեռելոց. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Տաճարի Ս. Գլխաղբի մատրան մէջ. պատարագիչն էր Նոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան, Յետ Ս. Պատարագի Թափօրական զնացքով Նոգեհանդիստեան կատարուեցան երջանկայիշատակ Տ. Կիւրեղ Պատրիարք Նոր շիրմին վրայ, ինչպէս նաև հին կրատան և Չամ-Թաղի գերեզմաններուն վրայ:

※ 18 Յուլիս Գշ. — Կ. ա. ժամը 11ին Սպանիոյ անկախութեան տարեդարձին առթիւ, քաղաքիս Սպանիոյ Հիւպատոսին հրաւերին, ներկայ գտնուեցաւ Նոգ. Տ. Սուրեն Վրդ. Քէմհանեան, ընկերակցութեամբ Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի և Տիար Կ. Հինդլեանի:

※ 21 Յուլիս Ուր. — Կ. ա. ժամը 10ին ի դիմաց Գեր. Տեղապահ Նոր Նոգ. Տ. Սուրեն Վրդ. ընկերակցութեամբ Նոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի և Պր. Կ. Հինդլեանի ներկայ գտնուեցաւ քաղաքիս Պեւնիզայի ընդհ. հիւպատոսին կողմէ տրուած հրաւերին, Պեւնիզայի անկախութեան տարեդարձին առթիւ:

Երեկոյեան ժամերգութիւնը ու վաղուան տօնին նախատեսակը կատարուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Նոգ. Տ. Սուրեն Վրդ. Քէմհանեանի:

※ 22 Յուլիս Շբ. — Ս. Թաղէսի Առաքելոյն եւ Սանդիսոյ Կուսին. Ս. Պատարագը Ս. Գլխաղբի մատրան մէջ մատոյց Նոգ. Տ. Գարեգին Աբեղայ Գաղանճեան:

※ 23 Յուլիս Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնատան մատրան մէջ, Պատարագիչն էր Նոգ. Տ. Նորայր Վրդ. Պօղարեան:

Կ. ա. ժամը 10ին կատարուեցաւ Ս. Թարգմանչաց վարժարանի տարեկան պաղարին բացումը, նախագահութեամբ Յորդանանի կառավարութեան վարչապետ Վսեմ. Սայիտ Փաշա Մուֆթիի, իրեն կ'ընկերանային Գեր. Տեղապահ Հայրը, վարչապետ Հայրեր, Արեւմտեան Յորդանանի Ընդհ. Վսեմ. Կուսակալը, Երուսաղէմի Վսեմ. Մութասարիֆը և այլ բարձրաստիճան կառավարական պաշտօնեաներ: Պաղարը տեւեց երկու օրեր:

※ 29 Յուլիս Շբ. — Երեկոյեան Ս. Աթոռ ժամանեց Գեր. Տ. Ռուբէն Ս. Արք. Մանասեան, իրեն ղրկաւորութեան գացած էին Նոգ. Տ. Միւռոն Վրդ. Կրճիկեան և Նոգ. Տ. Գարեգին Արք. Գաղանճեան:

※ 30 Յուլիս Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Պատարագեց և քարոզեց Նոգ. Տ. Ասողիկ Վրդ. Դադարեան, «Անցաք մեք ընդ հուր և ընդ սուր» բնաբանով:

Յ. մ. ժամը 4.30ին տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց նախակրթարանի ամսվերջի հանդէսը, Ե. Հ. Բարեօրակաւ Միութեան քրահին մէջ, հովանաւորութեամբ Գեր. Տեղապահ Նոր, եւ նախագահութեամբ Երուսաղէմի Մութասարըֆ Վսեմ. Ինսամ Պէշ Հաշիմի, Եղան հայերէն, արաբերէն և անգլերէն արտասանութիւններ և երգեր վարժարանի երկեսաշակերտութեան կողմէ: Հանդէսի աւարտին վարժարանի բարեջան Տեսուչ Նոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան կարգաց Տեսութեան Տարեկան Տեղեկագիրը (յաջօրդ՝ Օգոստոս Թիւսով պիտի տրուի լման Տեղեկագիրը), որմէ ետք Գեր. Տեղապահ Հայրը և Վսեմ. Մութասարիֆը բաժնեցին նախակրթարանի 24 երկեսաշակերտներու վկայականներն ու յաջողակ աշակերտներու մրցանակները. հանդէսը փակուեցաւ Գեր. Տեղապահ Նոր խօսքովն ու աղօթքովը:

ՎԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ

Ս. ԱԹՈՐ-ԷՆ ՆԵՐՍ

Պատ. Տնօրէն Ժողովոյ որոշմամբ Յուլիս ամսուայ ընթացքին հետեւայ պաշտօններու փոփոխութիւններ կատարուած են Մայրվանդէն Երես և հայապատկան մեր սրբաճիւղներուն մէջ:

Ս. Յարութեան Տեսուչ Եւանկուլած է Նոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

Բերդնիւմի վանքին վերահսուչ՝ Նոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան:

Ս. Ասուածածմայ Տաճարին Տեսուչ՝ Նոգ. Տ. Գարեգին Արք. Գաղանճեան:

Հայթայի Նոգեւոր Հովիւ՝ Նոգ. Տ. Տրդատ Վրդ. Պէրպէրեան:

Ս. Թարգմանչաց Վարժարանի առժամայ Տեսուչ՝ Նոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան:

Ս. Արքուոյ մասակարար՝ Նոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան:

Ս. Արքուոյ առժամայ դիւանապետ՝ Նոգ. Տ. Գարեգին Արք. Գաղանճեան: